Արձանագրություն 02 /հայտերի բացման և գնահատման նիստ/

«ՀՀՇՄԳՀՀԿՀ- ԳՀԾՁԲ-05/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

18 հունվարի, 2021թ., ժ 11:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալաբեկյան – Գյումրու համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Մկրտչյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ,

Տ. Ղազարյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի բաժնի գլխավոր մասնագետ,

Լ. Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

Օ. Գևորգյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ- ԳՀԾՁԲ-05/21» ծածկագրով գնման ընթացակարգի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 11.01.2021թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստը հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար Թափառող կենդանիների /շների/ վնասազերծման ծառայության ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ- ԳՀԾՁԲ-05/21» ծածկագրով ընթացակարգի համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի անվանումը		Հասցե
1.	Ա/Ձ Արմինե Եղիկյան	ՀՀ, ք. Գյումրի, Շիրակացու փ. 5/4

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը կազմվել և ուղարկվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.6. Մասնակցի առաջարկած գինը

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանում	Ա/Ձ Արմինե Եղիկյան			Նախահաշվային գին
		ԱԱՀ	Միավորի արժեքը առանց ԱԱՀ	Միավորի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Միավորի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն
1.	1.Թափառող էգ կենդանիների ստերիլիզացման ծառայություն – **250 հատ**	-	29 000	29 000	29 000
2.	2. Թափառող արու կենդանիների ստերիլիզացման ծառայություն – **100 հատ**	-	25 000	25 000	25 000

2.Հանձնաժողովը արձանագրեց՝

2.1. 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ Արմինե Եղիկյանի ներկայացրած գնային առաջարկը Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում է,

3.Հանձնաժողովը որոշեց՝

3.1. 1.«ՀՀՇՄԳՀՀԿՀ- ԳՀԾՁԲ-05/21» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած և հաղթող մասնակից ճանաչել Ա/Ձ Արմինե Եղիկյանին և հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

3.2. Սույն ընթացակարգի համար Գնումների մասին ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

3.3. Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի
նախագահ՝ ---------- Ա. Բալաբեկյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Մ. Մկրտչյան (ԳՊ/ԳԱ)

---------- Տ. Ղազարյան (ԳՊ/ԳԱ)

---------- Լ. Բարսեղյան (ԳՊ/ԲԱ)

---------- Օ. Գևորգյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)